



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց**

3 օգոստոսի 2017 թվականի N 33

**2. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հավանություն տալ Լաբորատոր համակարգի 2017-2019 թվականների զարգացման ծրագրին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. սեպտեմբերի 26
Երևան

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
օգոստոսի 3-ի նիստի N 33
արձանագրային որոշման

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատուն	Համակարարողը	Կատարման ժամկետը	Այնկալվող արդյունքը	Այնկալվող ֆինանսական միջոցները	Վերատուգելի չափանիշը
1	2	3	4	5	6	7	8
I. ՀԱՄԱԿԱՐԳՆԻՐ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՑԱՆՑԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՍՏԵՂԾՈՒՄ							
1.	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն		2017 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքում Համընդհանուր լաբորատոր ցանցի համակարգը, քաղաղրիչները, համընդհանուր լաբորատոր ցանցում ընդգրկված յուրաքանչյուր մակարդակի լաբորատորիաների գործառնությունները սահմանելու համար ՀՀ կառավարությանը լիազորությունների վերապահում	Ֆինանսավորում չի պահանջվում:	ՀՀ-ում լաբորատոր ցանցի ձևավորման իրավական հիմքեր ստեղծելու մասին մշակված ՀՀ օրենքի նախագիծ
2.	Համընդհանուր լաբորատոր ցանցի համակարգը, քաղաղրիչները, համընդհանուր լաբորատոր ցանցում ընդգրկված յուրաքանչյուր մակարդակի լաբորատորիաների գործառնությունները և օրենքից բխող անհրաժեշտ այլ գործառնությունները սահմանելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը/նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	1-ին կետով նախատեսված օրենքի ընդունումից հետո 4 ամսվա ընթացքում	Համընդհանուր լաբորատոր ցանցի համակարգի ստեղծում, համակարգում ընդգրկված լաբորատորիաների գործառնությունների սահմանում և տարանջատում, համագործակցության ապահովում, համակարգի կարողությունների կատարելագործում	Ֆինանսավորում չի պահանջվում:	Համընդհանուր լաբորատոր ցանցի համակարգում ընդգրկված բոլոր մակարդակների լաբորատորիաների գործունեության կանոնակարգում
3.	Լաբորատոր կարողությունների գնահատում, օրենսդրական բացերի վերլուծության իրականացում, համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարության	2019 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լաբորատոր համակարգի զարգացման 2017-2019թթ ծրագրի ավարտին լաբորատոր կարողությունների գնահատում, ատկա բացերի վերհանում և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների պլանավորում	Ֆինանսավորում չի պահանջվում:	Լաբորատոր կարողությունների գնահատման զեկնույցի և համակարգի զարգացման ճանապարհային

1	2	3	4	5	6	7	8
			<p>առընթեր միջուկային անվտանգության պետական կոմիտե</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>				քարտեզի անկախություն
II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՄԻԱԶԱԶԳԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՑԱՆՑԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ							
4.1.	<p>Միջազգային լաբորատոր ցանցերին մասնակցության ապահովում.</p> <p><u>1) Ընդլայնել ներկայիս համագործակցությունը հետևյալ ցանցերի հետ.</u></p>				Հայաստանի Հանրապետության լաբորատոր ոլորտի շարունակարար զարգացում միջազգային մոտեցումներին համահունչ: ԵՏՄ երկրների տարածքում Համընդհանուր լաբորատոր ցանցում ընդգրկված լաբորատորիաների արդյունքների փոխանցման ապահովում:	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հայաստանի Հանրապետության լաբորատոր համակարգում առաջատար երկրների գործելակարգերի և ժամանակակից մեթոդների ներդրում, վերապատրաստված լաբորատոր մասնագետներ: Հանրային առողջապահական ռեֆերենս լաբորատորիաների ընդգրկում Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում
	<p>ա. TESSY գրիպի և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի ոլորտի մասին,</p> <p>բ. ԱՀԿ կարմրուկի և կարմրախտի, պոլիոմիելիտի (CISID),</p> <p>գ. Եվրոռոտա ցանց,</p> <p>դ. «Մարդու և կենդանիների» փոխանցողներով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման (VectorNet) ցանց»</p> <p>ե. ԱՊՀ շրջանակներում՝ Ռուսաստանի Դաշնության «Միկրոբ» գիտազեղադրական ինստիտուտի հետ՝ հատուկ վտանգավոր ախտածինների մասով</p>	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	2017-2019 թթ.			
	<p><u>2) Սկսել անդամակցումն արդեն համաձայնեցված հետևյալ ցանցերին.</u></p> <p>ա. Մանդային և ջրային ծագման հիվանդությունների ցանց,</p> <p>բ. Լեզիոնելյուզների եվրոպական ցանցեր</p>	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	2018 թ. առաջին եռամսյակ			
	<p>3) Նախատեսել մասնակցությունը հետևյալ</p>	ՀՀ		սկսած 2018 թ.-ից			

1	2	3	4	5	6	7	8
	<p>ցանցերին՝</p> <p>ա. Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Ռուսպոտրեբնադզոր)</p> <p>Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտին՝ 8 ռեֆերենս կենտրոններով և 11 գիտահետազոտական լաբորատորիաներով</p> <p>բ.ԱՄՆ LRN ցանց</p> <p>գ. EpiSouth Plus ցանց</p>	<p>ատոլջապահության նախարարություն</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p>				
	<p>դ. Համառուսաստանյան բույսերի կարանտինի փորձաքննության գիտական կենտրոն (БНИИКР)»</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p>		<p>2019 թ.</p>			
	<p>4) Սկսել հանրային ատոլջապահական ռեֆերենս լաբորատորիաների՝ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեկորդում ընդգրկման գործընթաց</p>	<p>ՀՀ ատոլջապահության նախարարություն</p>		<p>2019 թ.</p>			
<p>4.2.</p>	<p>Միջազգային հեռուստա կազմակերպությունների լաբորատոր բաժանմունքների (առկա ցանցերի) հետ համագործակցություն</p>		<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն</p>				
	<p>1) Ֆիզիկատեխնիկական դաշնային մարմին (ԲԻՄ),</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>		<p>2017-2018 թթ.</p>			
	<p>2) Գերմանական միջազգային համագործակցության կազմակերպություն (GIZ),</p>			<p>2017-2019 թթ.</p>			

1	2	3	4	5	6	7	8
	3) ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO),			2017-2019 թթ.			
	4) Եվրոսայում մեծ հեռավորությունների վրա անդրասահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման ծրագիր (EMEP),	ՀՀ բնապահպանության նախարարություն		2017-2019 թթ.			
	5) Մթնոլորտի համաշխարհային դիտարկում (GAW), Առողջապահական համաշխարհային կազմակերպություն (WHO)			2017-2019 թթ.			
	Միջուկային և ճառագայթային միջադեպերի դեպքում որոշումների ընդունման Եվրոպական RODOS համակարգի տեղադրում և շահագործում	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության պետական կոմիտե		2019 թ. չորրորդ եռամսյակ			
4.3.	Անդամակցություն կենսանվտանգության միջազգային հետևյալ միավորումներին.		ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն				
	Միջազգային, Եվրոպական, Կենտրոնական Ասիայի և Կովկասի կենսանվտանգության ասոցիացիաներ	ՀՀ առողջապահության նախարարություն		2018 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ			
4.4.	Համագործակցություն հետևյալ միջազգային լաբորատորիաների և գիտական կենտրոնների հետ .						
	1) Ամերիկյան միկրոկենսաբանների ասոցիացիա	ՀՀ առողջապահության նախարարություն		2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ			
	2) «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ (CARD)	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		2017-2019 թթ.			
III. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԻՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐՂՈՒՄ							
5.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության պետական կոմիտե	1-ին կետով նախատեսված օրենքի ընդունումից հետո 6 ամսվա ընթացքում	Առողջապահական լաբորատորիաներում որակի կառավարման գործընթացի ապահովում	Ֆինանսավորում չի պահանջվում:	Առողջապահական լաբորատորիաներում ներդրված որակի կառավարման համակարգ

1	2	3	4	5	6	7	8
	որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը						
6.	«Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018 թ. երկրորդ կիսամյակ	Ազգային մակարդակի կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների հետ աշխատող լաբորատորիաների հավատարմագրման գործընթացի ապահովում ըստ միջազգային ոլորտային ստանդարտների	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Սահմանված գործունեության առանցքային ինդիկատորների (KPI) սահմանում, Համընդհանուր լաբորատոր ցանցում ազգային և միջազգային հավատարմագրում ունեցող լաբորատորիաների ընդգրկվածության ցուցանիշ:

